

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиς. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ Է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ֆայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Ֆայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տ Է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ

Հոկտեմբերի հինգի ծրագիրը. Հեռագիրներ.
Հայոց հայրը և զինվորական. Հայերի ընդհա-
րուակները թիւրքերի հետ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Չինների հարստութիւնը մեր լճերում. Նամակ
խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պերճախօս թեր.—ՀԵՌԱՊԵՐՆԵՐ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Այ-
տրեան արուեստագիտական հիմնարկութիւն.

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԻՆԳԻ ԾՐԱԳԻՐԸ

Ինչպէս և զուշակում էինք, չը նայելով
որ թիւրքաց կառավարութիւնը ամեն կերպ
աշխատում էր հրապարակ չը հանել սուլ-
թանի իրադէյով հաստատված հայկական
րէֆորմների նոր ծրագիրը, այնուամենայ-
նիւ, անգլիական «Times» լրագրի շնորհով,
այդ ծրագիրը այսօր ընդհանրութեան սեպ-
հակնութիւն դարձաւ:

Այն, ինչ որ պէտք է ուղղակի, պաշ-
տօնական ծանապարհով հրատարակվել է
զիտութիւն ընդհանրութեան, հրատարակ-
վում է անուղղակի, մասնաւոր ծանապար-
հով: Սակայն, այնու ամենայնիւ, զոչ պէտք
է լինել, որ վերջապէս հրատարակվել այն
բոլորականը, որին անհամբեր սպասում էր
թիւրքիայի ամբողջ հայ ժողովուրդը և
որի բովանդակութիւնը էր կանխած նրա
խաղաղ կամ անհանգիստ արամադրու-
թիւնը:

Այժմ թիւրքիայի հայ ժողովուրդը կա-
րող էր հանդարտ կերպով սպասել կայսերա-
կան իրադէյով հաստատված և մեծ պետու-
թիւնների հաւանութեան արժանացած
ծրագրի իրագործման և զործադրութեան,
եթէ միայն նորանոր ցաւով միջնադարը չը
զային խանգարելու կարող և խաղաղութիւնը
թիւրքիայում և նոր քաղաքական բաղադ-
րութիւններ ստեղծելու:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՅՏՐԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Մշակի» մէջ տպված մեր նախորդ յօդուած-
ներով մենք հայտնեցինք, որ հայր Արքեմ Այ-
տրեանի յիշատակայ յօդուածը արժանաւորա-
պէս տօնելու համար երկու որոշումներ են կայ-
ացրված:

Առաջինն այն է, որ հայ բանասէրների և հայ
գրականութեան համակրող հասարակութեան կող-
մից պէտք է հ. Այտրեանին ընծայ արվել Վի-
էնայի Միւնիխի միաբանութեան մատենա-
դարանի հայ ձեռագիրների մինչև այժմ չը տպա-
գրված հարուստ ցուցակը: Այդ ցուցակը արդէն
հրատարակված է ձեռք և չքել տպագրութեամբ
և մատուցված յօդուածներն ամօնախմբութեան օ-
րը, հոկտեմբերի 22-ին:

Աւելի կարեւոր է երկրորդ որոշումը, որը դեռ
չէ իրագործված և որի մասին կը ցանկանայինք
մի քիչ ընդարձակօրէն խօսել, ի նկատի ունենա-
լով որ այդ որոշման իրագործումը մշտնջենա-
պէս կենդանի պէտք է պահէ մեծ բանասէրի և
արուեստագէտի անուշը:

Հանդէս Ամսօրեայի» ասլիքի համարը, ինչ-
պէս և տեղական լրագրի մեր ծանուցին, որ
Վիէնայում տեղական հայ գաղթականութեան
ներկայացուցիչներից և երեք Միւնիխի վարդա-
պետներից կազմված յանձնախումբը՝ իր անդա-
մներից Զ. Բօրովիչի առաջարկութեամբ ծրագրել
է «Այտրեանի Արուեստագիտական Հիմնարկու-
թիւն» անունով մի հաստատութիւն կազմել, որի
գործը պիտի լինի Արեւելից—Թիւրքիայից,
Պարսկաստանից և Ռուսաստանից հայ աղքատ

Դժբաղդաբար, վերջին հեռագիրները, ու-
րոնք տպվում են «Մշակի» մէջ, ցոյց են տա-
լիս, որ կարգը, խաղաղութիւնը և անդու-
րութիւնը ոչ միայն չէ վերահաստատվում
թիւրքաց հայաստանում, այլ օրից օր
սպառնալից կերպով անցնում է ստանում:
Գուցէ ժողովրդի խաղաղացման և ան-
դորութեան գործին նպաստէ ծրագրի
պաշտօնական հրատարակութիւնը և Բ.
Դրան ցոյց տուած պատրաստակաւութիւ-
նը՝ անմիջապէս, առանց յետաձգելու, իրա-
գործել և գործադրել ռէֆորմները, եթէ
միայն թիւրքաց կառավարութիւնը չը շա-
րունակէ իր անխոհմէ քաղաքականութիւնը
ծրագրի բովանդակութիւնը գաղտնի պա-
հելու իր ժողովուրդից:

Եթէ անկեղծ է թիւրքաց կառավարու-
թեան արած նոր քայլը միայն վերահս-
կող յանձնաժողովի անդամների նշանակման
մասին, ինչպէս հայտնի է «Մշակի» հեռա-
գիրը, պէտք է ուրեմն յուսալ որ շատ
մօտ ապագայում վաղուց սպասված ռէ-
ֆորմները կը մտնեն հայաբնակ վեց վի-
լայէթների մէջ, որոնք այսօր սարսափելի
անկարգութեան տեսարան են դարձել, և
տանջված, խեղճ ժողովուրդը մի փոքր
շունչ կը քաշէ, մի քիչ կը հանգստանայ
և իր սովորական, խաղաղ գրադմունքները
կը շարունակէ:

Կրկնում ենք, որ այժմ ամեն բան կան-
ված է սուլթանի կառավարութեան ան-
կեղծ, անկարգաւ և բարի ցանկութիւնից
մի ժամ, մի րօպէ առաջ իրագործելու իր
տուած խոտուածները և մտնելու ռէֆորմ-
ները:

Եւ թէ Բիթլիսում և Երզրումում տե-
ղի ունեցած հայերի սոսկալի նոր ջարդը
վերին աստիճանի յուսահատական է և
ամենեւին չէ սաղում սուլթանի մեծ պե-
տութիւնների ղեկավարներին տուած խոս-

պատանիներ բերել տալ Վիէնա և այնտեղ
նրանց արուեստներ սովորեցնել 3—4 տարի և
վարպետ հանելով վերադարձնել իրանց հայրե-
նիքի: Դիւրին է ըմբռնել, թէ ինչ բազմազուտ
արդիւնք կարող է առաջ բերել մի աղքատի
հաստատութիւն բովանդակ հայ ազգի համար:

Ամենքին յայտնի է, թէ առհասարակ Հայաս-
տան որչափ կարօտ է հմուտ արուեստագէտներին,
իր անբաւ անվաղ նիւթերը ըստ երօցականին
ձեռակերտելու համար, որով ոչ միայն ի-
րանք արուեստագէտները նիւթապէս կազան-
վելին իրանց ապագան, այլ և երկրի անծապէս
պիտի օգտվել դրանով: Բացի արուեստներից,
հայ երիտասարդները պիտի կարողանան ծանո-
թանալ եւրօպական լեզուին և կենսաբան, կըն-
տեղական աշխատասիրութեան և խնայողութեան
և բնակիչով անհամեմատ աւելի զարգացած
շրջանում, բարեպաշտ ևս կը կրթվեն: Եւ այս
ամենը համեմատաբար չնչին զոհողութեամբ,
այն է 400 ֆրանկ, կամ մօտ 150 ռուբլի վճա-
րով, միայն առաջին տարեկան համար, որովհետեւ
հետեւեալ տարիները նոր արուեստագէտները պիտի
կարողանայ արդէն այնչափ հմտանալ գործին, որ
իր ապրուստը չահի առանց կողմնակի նպաստի:

Քանի մի խօսք էլ խնդրի իրագործման գործ-
նական եղանակի մասին:

Մեզ թվում է, թէ ամենք սխալ են հասկա-
նում այս հաստատութեան միտքը, կարծելով թէ
զաւ պիտի լինի մի արուեստագիտական ուսում-
նարան: Թէ և չը գիտենք, թէ ինչ նոր մանրա-
մասնութիւններ է մշակած յանձնախումբը, բայց
մեր կողմից անյարմար չենք համարում հետեւեալ
գիտողութիւններն անելու:

Նախ՝ առանձին արուեստանոց, կամ արուես-
տագիտական ուսումնարան բանալու համար, ա-
րուեստների զանազան ճիւղերով, հէց սկզբ-
բից հարկաւոր է մեծ դրամագումար և ապա

տուժներին, թէ ռէֆորմները անպատճառ
կիրագործվեն, բայց և այնպէս պէտք է
յուսալ, որ քրիստոնէայ պետութիւնների,
մանաւանդ Ռուսաստանի հզօր միջամու-
թիւնը վերջ կը դնեն շուտով այդ կոտո-
րածներին և ռէֆորմների ծրագիրը իր ամ-
բողջութեամբ կիրագործվի:

Մենք այժմ չենք քննում այն հարցը, թէ
որքան անբաւարար է, որքան աննշան հոկ-
տեմբերի ծրագիրը, բայց եթէ այդ ծրագ-
րի իրագործումը կարող է ապահովացնել
թիւրքիայի թշուառ հայերի կենսաբան, գոյ-
քը և ընտանեկան պատիւը, մեզ մնում է
միայն շնորհապարտ լինել եւրօպական պե-
տութիւններին, որ նրանց շնորհով հայերը
վերջապէս կազաւան վերահաս վտանգից:

Ամենալրջաւորն է այժմ—ստիպել թիւր-
քիային վերջ դնել անմեղ, անպաշտպան,
անպէս մի թշուառ ժողովուրդի կոտորածին
և մտնել շուտով ռէֆորմները:

ՀԵՌԱՊԵՐՆԵՐ (Սեփական)

Հոկտեմբերի 25-ին, երեկոյան ժամի
11-ին, ստացանք Երզրումից, Կարաուր-
գանի վրայով, մեր սեփական թղթակցի
հեռագիրը, որից առաջ ենք բերում հե-
տեւեալ կտորները.

«Երզրում, 23 հոկտեմբերի: Ամինս
18-ին, ցերեկվայ 12 ժամին, զինուորական
սիգնալի փողերը դէպի բազարն ուղղեցին
աւելի-քան 2000 զինուոր, որոնք ամեն
կողմից շրջապատեցին հայերի խանութնե-
րը, մազաղինները, տները, և հրացանի
բռնեցին բոլորին, ոչ զքի թայլ չը տալով
անցկենայ: Մի և նոյն ժամանակ կոտո-
րածը սկսվեց հետեւել թաղերում—Թալ-
րէզը, Կիւրջիգը, Սպայի-բազար, Աթ-

մէյրանի, Չայխաբի, Ղույումչիխանա, Կէօյ-
բաշի և առհասարակ ամեն տեղ, որտեղ
ապրում և առեւտուր էին անում հայերը,
բացի եկեղեցու և Սանասարեան վարժա-
րանի թաղերից:

«Հրացանաձգութիւնն ու կոտորածը տե-
ւեցին մինչև զինելովայ 12 ժամը: Զօր-
քի ետեւից գնում էին բաշիբոզուկնե-
րը: Քսան հազար մարդուց բաղկացած
ամբոխը կողոպտում էր և ոչնչացնում
հայոց բոլոր խանութները, մազաղիննե-
րը, տները, տաներով մինչև վերջին շիւ-
ղը, և մի քանի թաղերում հրդեհ գցե-
լով, որը խաղաղ եղանակի շնորհիւ չը տա-
րածվեց: Սպանված է ութ հարիւր մարդ,
վիրաւորված է հինգ հարիւր, բազմաթիւ
մարդիկ անյայտացած են:

«Կառավարութիւնը զիշերը դիտելով քա-
ղաքից դուրս կրեց և նետեց նախապէս պաշ-
տատված հորերի մէջ: Ամին 19-ին կանայք և
որբերը դստն մօտ երեք հարիւր դիակ, ամ-
սի 20-ին դարձեալ երկու հարիւր: Վնասը
հասնում է մօտ հինգ հարիւր հազար լի-
րայի: Եկեղեցու մօտի աշակերտները մի օր
փակվեցին եկեղեցում: Իսկ հեռաւոր ու-
սումնարաններում՝ զիշերեցին նոյն իսկ
ուսումնարաններում:

«Մերեան ուսումնարանի հինգ հարիւր ա-
շակերտներին և աշակերտուհիներին պաշտ-
պանեց իրանի հիւպատոսարանը: Բացի
սրանից, իսխակ խանը ապաստարան ար-
ւեց 18-ին, ցերեկվայ 12 ժամին, զինուորական
ինչպէս աշակերտներին և աշակերտուհիներ-
ին, նոյնպէս և միւսներին նա փառով
կերակրեց: Երզրումի շրջակայքում ոչնչաց-
րած են աւելի քան քառասուն հայ զիւ-
ղեր. մարդկանց սպանելով՝ տանում էին
բոլոր կահադրասիքը, մինչև վերջին հացա-
հատիկը և բոլոր անասունները: Բիւրաւոր
որբեր և անտնակացածներ անթիւ են մնա-

ղաքաւան կանոնաւոր և կատարելագործված
եւրօպական ձեռք, առաջն առած կը լինեք օ-
տար ձեռակերտների մեր երկրը սղողելուն, ո-
րից ընտանաբար մեծ բարւոքում առաջ կը
գայ ընդհանուր ազգի անտեսական վիճակին:

Վերջին տեղեկութիւններէ— Կոտայքում, Հիւ-
նարկութեան կանոնաւորութիւնն արդէն պատ-
րաստ է և շուտով կը հրատարակվի: Այն ժամա-
նակ աւելի մօտից կարելի է ծանօթանալ գործի
մանրամասնութեան: Առ այժմ այս արդէն յայտ-
նի է, որ յանձնախումբը որոշել է միայն 6,000
ֆրանկի դրամագումար ունենալ իբրեւ պահեստ, և
հետզհետէ հաւաքած գումարները գործադրել
ուղղակի նպատակի իրագործման:

Արդ երկու խօսք էլ յանձնախումբի հասցէին:
Հարակից չը կայ, որ յանձնախումբը կազմող
անձինք կատարելապէս արժանի են հնորակա-
րութեան այն գովելի նախաձեռնութեան հա-
մար, որ յանձն են առել այս գործում:
Յանձնախումբի յարգելի անդամներն անուշտ
պիտի յարատեւեն նոյն եռանդով, փոխադարձ
անձնական յարաբերութիւններից վեր դառնալով
ընդհանուր գործը, մասնաւոր երբ իրանք են,
որ հայ հասարակութիւնը հրաւիրում են օգ-
նելու իրանց ստեղծած ազգօգուտ ձեռնարկու-
թեան: Մինչև անգամ եթէ ենթադրենք, որ
ներկայ հանգամանքի մէջ, հասարակութիւնը
զանազան և պատշաճաւոր ուղղութիւնն չը
զարմէն այդ գործին՝ սակայն ինքը յանձնա-
խումբը դրանից պէտք չէ որ վատով, այլ պէտք
է շարունակէ ունենալ նոյն եռանդը, առ այժմ
հանգամանքների համեմատ համեստ կերպով տա-
նելով գործը, մինչև որ բարեկալով պարագաներ
առաջ գան, և հիմնարկութիւնը ընդունի փախադ-
ված ընդարձակութիւնը:

Ա. Սարգսյան

«Հայկական հեռագրում են, որ մի հայ քահանայ

Մինչև վերջին ռուս-թիւրքական պատերազմը

